ՈՐՈՇՈՒՄ

Ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

«31» օգոստոսի 2018թ.

քաղաք Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Տ.Հակոբյանս, վերանայելով վարույթիս թիվ 17110818 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2018թ. հուլիսի 29-ին՝ ժամը 22:10-ին <<Սուրբ Գրիգոր Լուսավորիչ>> ԲԿ-ից հաղորդում է ստացվել ոստիկանության Նոր Նորքի բաժին, այն մասին, որ Երևան քաղաքի Նոր Նորքի 6-րդ զանգվածի Շոպրոնի 2-րդ նրբանցք 5-րդ շենքի թիվ 48 բնակարանից բժշկական կենտրոն են տեղափոխվել Գեղամ Աղասու Մկրտչյանը՝ <<բազմաթիվ կտրած վերքեր>> ախտորոշմամբ և Էռաստ Ռուդոլֆի Ավետիսյանը՝ <<կրծքավանդակի ծակած կտրած վերք>> ախտորոշմամբ:

Ըստ <<Սուրբ Գրիգոր Լուսավորիչ>> բ/կ-ից ստացված հիվանդության պատմագրերի տվյալների Էռաստ Ռուդոլֆի Ավետիսյանի մոտ ախտորոշվել է կրծքավանդակի աջ կեսի կտրած-ծակած թափանցող վիրավորում՝ թոքի վնասումով, հեմոթորաքս ձախ կեսի կտրած-ծակած վերք ախտորոշումը, իսկ Գեղամ Աղասու Մկրտչյանի մոտ՝ որովայնի առաջային պատի կտրած-ծակած թափանցող վերք, կրծքավանդակի ձախ կեսի կտրած-ծակած թափանցող վիրավորում հեմոթորաքս ախտորոշումը:

Դեպքի առթիվ 30.07.2018թ. նախապատրաստված նյութերով ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 17110818 քրեական գործը, ընդունվել վարույթ:

Կատարված դեպքի վայրի զննության մասնակից Վանիկ Հարությունի Բաբայանը ներկայացրել է դանակ, որի վրա եղել են արնանման նյութի հետքեր և հայտարարել, որ նշված դանակը վերցրել է նույն շենքի բակում գտնված մի անծանոթ տղամարդուց, ով եղել է ալկոհոլի ազդեցության տակ:

Քրեական գործով տուժող ճանաչված Էռաստ Ռուդոլֆի Ավետիսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2018 թվականի հուլիսի 29-ին ժամը 14:30-ի սահմաններում դուրս է եկել տանից և գնացել Նոր Նորքի 6-րդ զանգվածում շրջելու: Քանի որ գումար չի ունեցել, ցանկացել է ինչ-որ մեկից պարտքով գումար վեցնել, որպեսզի ծխախոտ և խմիչք գնի: Գնացել է «Հուշարձանի այգի» կոչվող վայր, որը գտնվում է իր շենքի վերևի հատվածում: Այգում մի անծանոթ տղամարդուց ծխախոտ է խնդրել, ով չմերժելով իր խնդրանքը՝ ծխախոտ է հյուրասիրել: Այդ տղամարդը նույնպես գտնվել է ալկոհոլի ազդեցության տակ: Խոսակցության ընթացքում իրեն առաջարկել է գարեջուր խմել, որին համաձայնվել է: Դրանից հետո այդ տղամարդու հետ խանութից գնումներ են կատարել և գնացել Երևան քաղաքի Նոր Նորքի 6-րդ զանգվածի Շոպրոնի 2-րդ նրբանցք 5-րդ շենքի՝ իրեն պատկանող թիվ 48 բնակարան, որտեղ շարունակել են երկուսով օղի ու գարեջուր խմել: Որոշ ժամանակ անց իր բնակարան է եկել ընկերը՝ Գեղամ Աղասու Մկրտչյանն, ով բնակվում է իրենց

թաղամասում: Դրանից հետո երեքով միասին շարունակել են օղի խմել: Այդ ընթացքում խոհանոցից բերել է խոհանոցային դանակը, որպեսզի ձմերուկ կտրի: Ժամը 21:00-ի սահմաններում իր և այդ տղամարդու միջև վիճաբանություն է ծագել, սակայն չի հիշում, թե ինչ հարցի շուրջ: Ինքը և այդ տղամարդը հյուրասենյակից գնացել են միջանցք: Վիճաբանությանը միջամտել է Գեղամ Մկրտչյանը, որի ընթացքում այդ տղամարդը խոհանոցային դանակով հարվածել է Գեղամ Մկրտչյանին, ինքն առաջ է գնացել, որի ժամանակ այդ տղամարդը դանակով անկանոն շարժումներ է կատարել, որի ընթացքում երկու անգամ հարվածել է իր կրծքավանդակին, որից հետո դուրս է եկել իր բնակարանից և դանակը ձեռքին դիմել փախուստի: Չի հիշում, թե ինչ հարցի շուրջ է իրենց միջև վիճաբանություն ծագել, նրան հանդիպել է առաջին անգամ: Նա եղել է մոտ 45-50 տարեկան, կարճահասակ, նիհարավում կազմվածքով, հագին եղել է կապույտ գույնի կարճաթև մայկա, ջինսե տաբատ, դեմքին առկա է եղել մազածածկույթ:

Նույնաբովանդակ ցուցմունք է տվել նաև որպես տուժող ճանաչված Գեղամ Աղասու Մկրտչյանն՝ ավելացնելով, որ իր և Էռաստ Ավետիսյանի հետ վերջինիս բնակարանում օղի խմած տղամարդու անունը Դավիթ է եղել: Խոսակցության ընթացքում իմանալով, որ Էռաստ Ավետիսյանը ծնունդով Լեռնային Ղարաբաղից է, Դավիթը նրան անվանել է բաքվեցի թուրք, ինչը դուր չի եկել Էռաստ Ավետիսյանին: Այդ պատճառով նրանց միջև վիճաբանություն է ծագել, որը վերածվել է քաշքշուկի:

2018 թվականի օգոստոսի 1-ին Գեղամ Աղասու Մկրտչյանին և Էռաստ Ռուդոլֆի Ավետիսյանին ծանր մարմնական վնասվածքներ պատճառելու կասկածանքով ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժին է բերման ենթարկվել Երևան քաղաքի Նոր Նորքի 5-րդ զանգվածի Մառի նրբ. 6 շենքի 86 բնակարանի բնակիչ, 21.03.1977թ. ծնված Դավիթ Գրիգորի Եգանյանը, ով ներկայացվել է ՀՀ քննչական կոմիտեի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին:

Նույն օրը Դավիթ Գրիգորի Եգանյանը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործություն կատարելու կասկածանքով ձերբակալվել է:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Դավիթ Գրիգորի Եգանյանը 24.06.2012թ. հաշվառված է ՀՀ ԱՆ «Ավան հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ում՝ «Անձի և վարքի խանգարում գլխուղեղի օրգանական ախտահարման հետևանքով» ախտորոշմամբ, ինչպես նաև ոչ բավարար չափով է տիրապետում քրեական դատավարության լեզվին:

Կասկածյալ Դավիթ Գրիգորի Եգանյանը ներկայացվել է տուժող Էռաստ Ռուդոլֆի Ավետիսյանի ճանաչմանը, որի ընթացքում տուժող Էռաստ Ավետիսյանը մատնացույց է արել Դավիթ Եգանյանին և հայտարարել, որ իրեն և Գեղամ Մկրտչյանին 29.07.2018թ. իր բնակարանում խոհանոցային դանակով հարվածել և մարմնական վնասվածքներ է պատճառել վերջինս:

Տուժողներ Էռաստ Ռուդոլֆի Ավետիսյանը և Գեղամ Աղասու Մկրտչյանն իրենց տված ցուցմունքները պնդել են կասկածյալ Դավիթ Գրիգորի Եգանյանի հետ առերես հարցաքննությունների ժամանակ:

03.08.2018 թվականին Դավիթ Գրիգորի Եգանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով այն **հանրորեն վտանգավոր**

այն արարքի կատարման համար, որ նա դիտավորությամբ երկու անձանց՝ Էռաստ Ավետիսյանին և Գեղամ Մկրտչյանին պատճառել է կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածքներ:

Այսպես՝

Դավիթ Եգանյանը 2018թ. հուլիսի 29-ին՝ ժամը 16:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Նոր Նորքի 6-րդ զանգվածի <<Հուշարձան>> կոչվող այգում պատահական հանդիպել է Էռաստ Ավետիսյանին և Գեղամ Մկրտչյանին ու վերջիններիս առաջարկել գարեջուր խմել. Դավիթ Եգանյանի առաջարկը ընդունելով Էռաստ Ավետիսյանն էլ իր հեռթին առաջարկել է գարեջուրը խմել Երևան քաղաքի Նոր Նորքի 6-րդ զանգվածի Շոպրոնի 2-րդ նրբանցքի՝ իրեն պատկանող թիվ 48-րդ բնակարանում: Այդ կապակցությամբ խանութից գնել են օղի, գարեջուր, սնունդ և գնացել են Էռաստ Ավետիսյանի վերը նշված բնակարան ու երեքով միասին օղի և գարեջուր են օգտագործել: Խոակցության ընթացքում Դավիթ Եգանյանը Էռաստ Ավետիսյանին սկսել է անվանել <<Թուրք>>, <<Թուրքի լամուկ>>, ինչի կապակցությամբ Էռաստ Ավետիսյանի և Դավիթ Եգանյանի միջև վիճաբանություն է ծագել, որին միջամտել է Գեղամ Մկրտչյանն, այդ ընթացքում Դավիթ Եգանյանը սեղանի վրայից վերցրել է խոհանոցային դանակ և երկու անձանց առողջությանը ծանր վնաս պատճառելու դիտավորությամբ հարվածներ հասցրել Էռաստ Ավետիսյանին և Գեղամ Մկրտչյանին:

Դավիթ Եգանյանի գործողությունների արդյունքում Էռաստ Ավետիսյանի առողջությանը պատճառվել է՝ կրծքավանդակի աջ կեսի կտրած-ծակած թափանցող վիրավորում՝ թոքի վնասումով, հեմոթորաքս ձախ կեսի կտրած-ծակած վերքի ձևով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս, իսկ Գեղամ Մկրտչայնին՝ որովայնի առաջային պատի կտրած-ծակած թափանցող վերք, կրծքավանդակի ձախ կեսի կտրած-ծակած թափանցող վիրավորում հեմոթորաքս վնասվածքների ձևով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս:

Առաջադրված մեղադրանքի վերաբերյալ Դավիթ Եգանյանը իրեն լիովին մեղավոր է ճանաչել և տվել է խոստովանական ցուցմունք:

03.08.2018 թվականին Դավիթ Գրիգորի Եգանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառել կալանավորումը:

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Դավիթ Գրիգորի Եգանյանի մտավոր զարգացած լինելու աստիճանը, հոգեկան առողջության վիճակը և գործի համար նշանակություն ունեցող մի շարք այլ հարցեր, պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբանության և հոգեբուժության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 85-րդ, 243-244-րդ, 246-րդ, 248-րդ և 250-րդ հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 17110818 քրեական գործով նշանակել դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր ստացիոնար փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ստացիոնար հոգեբուժական բաժանմունքի փորձագետներին:
2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը՝

- Ինչպիսի անհատական-հոգեբանական առանձնահատկություններ ունի Դավիթ Գրիգորի Եգանյանը:
- Դավիթ Գրիգորի Եգանյանին բնորոշ են այնպիսի անհատական հոգեբանական առանձնահատկություններ, որոնք կարող էին էապես ազդել հետազոտվող իրավաիճակում նրա վարքի վրա:
- Հաշվի առնելով Դավիթ Գրիգորի Եգանյանի անհատական հոգեբանական առանձնահատկությունները, ինտելեկտուալ և անձնային զարգացման մակարդակը և հետազոտվող իրավիճակի բովանդակությունը՝ կարող էր արդյոք նա հասկանալ իր կողմից կատարվող գործողությունների բնույթն ու նշանակությունը:
- Որոնք են Դավիթ Գրիգորի Եգանյանի իմացական գործընթացների անհատական առանձնահատկությունները և նա կարող էր արդյոք ճիշտ ցուցմունքներ տալ:
- Դավիթ Գրիգորի Եգանյանը հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե այո, ապա ինչ ախտորոշումով և հիվանդությունը զրկել է նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:
- Դավիթ Գրիգորի Եգանյանը առերևույթ հանցագործությունը կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե այո, ապա ինչ ախտորոշումով և հիվանդությունը զրկել է նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից, արարքը կատարելու պահին վերջինս եղել է մեղսունակ, թե ոչ:
- Ներկայումս Դավիթ Գրիգորի Եգանյանը հոգեկան հիվանդությամբ տառապում է, թե ոչ, եթե այո, ապա ինչ ախտորոշումով և հիվանդությունը զրկում նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից, վերջինս մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:
- Դավիթ Գրիգորի Եգանյանը հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում:
- Դավիթ Գրիգորի Եգանյանը առերևույթ հանցագործությունը կատարելու պահին հոգեկան խիստ հուզմունքի /աֆեկտի/ վիճակում գտնվել է, թե ոչ, եթե այո, ապա այն զրկել է, արդյոք, վերջինիս ամբողջությամբ իր գործողության վտանգավորությունը գիտակցելու և դա ղեկավարելու հնարավորությունից:
- Դավիթ Գրիգորի Եգանյանը կարող է արդյոք ճիշտ ընկալել երևույթները, թե ոչ, ընդունակ է արդյոք երևույթների ճիշտ ընկալման և վերարտադրման, նրա մոտ հոգեկան սթրեսի երևույթներ նկատելի են, թե ոչ:
- Դավիթ Գրիգորի Եգանյանն իր հոգեկան վիճակով ներկայումս կարող է մասնակցել քննչական և այլ դատավարական գործողություններին, կարող է կանգնել քննության և դատարանի առաջ, թե ոչ:
- Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն, կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետների իրավասությունների մեջ և որոնց պարզաբանումը կարող է էական նշանակություն ունենալ:

3. Մեղադրյալ Դավիթ Գրիգորի Եգանյանը գտնվում է ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ-ում:

4. Փորձագետներին տրամադրել սույն որոշման օրինակը, իսկ Դավիթ Գրիգորի Եգանյանը, քրեական գործի նյութերը և վերջինիս անվամբ լրացված բժշկական փաստաթղթերը կտրամադրվեն ըստ պահանջի:

5. Փորձագետներին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները: Միաժամանակ փորձագետին նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, եզրակացություն տալուց հրաժարվելու, առանց քննիչի թույլտվության նախաքննության տվյալները հրապարակելու համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ, 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին: Փորձագետին նախազգուշացնել նաև փորձաքննություն կատարելու համար նրան տրամադրված քրեական գործի կամ այլ նյութերի պահպանության նկատմամբ անփութություն ցուցաբերելու հետևանքով դրանց կորստի, ոչնչացման կամ հափշտակելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված հնարավոր պատասխանատվության մասին:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝ ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Փորձագետ ճանաչելու մասին.

«03» հոկտեմբերի 2018թ. քաղաք Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Տ.Հակոբյանս, քննարկելով վարույթիս թիվ 17110818 քրեական գործի նյութերն.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018թ. հուլիսի 29-ին՝ ժամը 22:10-ին <<Սուրբ Գրիգոր Լուսավորիչ>> ԲԿ-ից հաղորդում է ստացվել ոստիկանության Նոր Նորքի բաժին, այն մասին, որ Երևան քաղաքի Նոր Նորքի 6-րդ զանգվածի Շոպրոնի 2-րդ նրբանցք 5-րդ շենքի թիվ 48 բնակարանից բժշկական կենտրոն են տեղափոխվել Գեղամ Աղասու Մկրտչյանը՝ <<բազմաթիվ կտրած վերքեր>> ախտորոշմամբ և Էռաստ Ռուդոլֆի Ավետիսյանը՝ <<կրծքավանդակի ծակած կտրած վերք>> ախտորոշմամբ:

Ըստ <<Սուրբ Գրիգոր Լուսավորիչ>> բ/կ-ից ստացված հիվանդության պատմագրերի տվյալների Էռաստ Ռուդոլֆի Ավետիսյանի մոտ ախտորոշվել է կրծքավանդակի աջ կեսի կտրած-ծակած թափանցող վիրավորում՝ թոքի վնասումով, հեմոթորաքս ձախ կեսի կտրած-ծակած վերք ախտորոշումը, իսկ Գեղամ Աղասու Մկրտչյանի մոտ՝ որովայնի առաջային պատի կտրած-ծակած թափանցող վերք, կրծքավանդակի ձախ կեսի կտրած-ծակած թափանցող վիրավորում հեմոթորաքս ախտորոշումը:

Դեպքի առթիվ 30.07.2018թ. նախապատրաստված նյութերով ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 17110818 քրեական գործը, ընդունվել վարույթ:

Կատարված դեպքի վայրի զննության մասնակից Վանիկ Հարությունի Բաբայանը ներկայացրել է դանակ, որի վրա եղել են արնանման նյութի հետքեր և հայտարարել, որ նշված դանակը վերցրել է նույն շենքի բակում գտնված մի անծանոթ տղամարդուց, ով եղել է ալկոհոլի ազդեցության տակ:

Քրեական գործով տուժող ճանաչված Էռաստ Ռուդոլֆի Ավետիսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2018 թվականի հուլիսի 29-ին ժամը 14:30-ի սահմաններում դուրս է եկել տանից և գնացել Նոր Նորքի 6-րդ զանգվածում շրջելու: Քանի որ գումար չի ունեցել, ցանկացել է ինչ-որ մեկից պարտքով գումար վեցնել, որպեսզի ծխախոտ և խմիչք գնի: Գնացել է «Հուշարձանի այգի» կոչվող վայր, որը գտնվում է՝ իր շենքի վերևի հատվածում: Այգում մի անծանոթ տղամարդուց ծխախոտ է խնդրել, ով չմերժելով իր խնդրանքը՝ ծխախոտ է հյուրասիրել: Այդ տղամարդը նույնպես գտնվել է ալկոհոլի ազդեցության տակ: Խոսակցության ընթացքում իրեն առաջարկել է գարեջուր խմել, որին համաձայնվել է: Դրանից հետո այդ տղամարդու հետ խանութից գնումներ են կատարել և գնացել Երևան քաղաքի Նոր Նորքի 6-րդ զանգվածի Շոպրոնի 2-րդ նրբանցք 5-րդ շենքի՝ իրեն պատկանող

թիվ 48 բնակարան, որտեղ շարունակել են երկուսով օղի ու գարեջուր խմել: Որոշ ժամանակ անց իր բնակարան է եկել ընկերը՝ Գեղամ Աղասու Մկրտչյանն, ով բնակվում է իրենց թաղամասում: Դրանից հետո երեքով միասին շարունակել են օղի խմել: Այդ ընթացքում խոհանոցից բերել է խոհանոցային դանակը, որպեսզի ձմերուկ կտրի: Ժամը 21:00-ի սահմաններում իր և այդ տղամարդու միջև վիճաբանություն է ծագել, սակայն չի հիշում, թե ինչ հարցի շուրջ: Ինքը և այդ տղամարդը հյուրասենյակից գնացել են միջանցք: Վիճաբանությանը միջամտել է Գեղամ Մկրտչյանը, որի ընթացքում այդ տղամարդը խոհանոցային դանակով հարվածել է Գեղամ Մկրտչյանին, ինքն առաջ է գնացել, որի ժամանակ այդ տղամարդը դանակով անկանոն շարժումներ է կատարել, որի ընթացքում երկու անգամ հարվածել է իր կրծքավանդակին, որից հետո դուրս է եկել իր բնակարանից և դանակը ձեռքին դիմել փախուստի: Չի հիշում, թե ինչ հարցի շուրջ է իրենց միջև վիճաբանություն ծագել, նրան հանդիպել է առաջին անգամ: Նա եղել է մոտ 45-50 տարեկան, կարճահասակ, նիհարավում կազմվածքով, հագին եղել է կապույտ գույնի կարճաթև մայկա, ջինսե տաբատ, դեմքին առկա է եղել մազածածկույթ:

Նույնաբովանդակ ցուցմունք է տվել նաև որպես տուժող ճանաչված Գեղամ Աղասու Մկրտչյանն՝ ավելացնելով, որ իր և Էռաստ Ավետիսյանի հետ վերջինիս բնակարանում օղի խմած տղամարդու անունը Դավիթ է եղել: Խոսակցության ընթացքում իմանալով, որ Էռաստ Ավետիսյանը ծնունդով Լեռնային Ղարաբաղից է, Դավիթը նրան անվանել է բաքվեցի թուրք, ինչը դուր չի եկել Էռաստ Ավետիսյանին: Այդ պատճառով նրանց միջև վիճաբանություն է ծագել, որը վերածվել է քաշքշուկի:

2018 թվականի օգոստոսի 1-ին Գեղամ Աղասու Մկրտչյանին և Էռաստ Ռուդոլֆի Ավետիսյանին ծանր մարմնական վնասվածքներ պատճառելու կասկածանքով ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժին է բերման ենթարկվել Երևան քաղաքի Նոր Նորքի 5-րդ զանգվածի Մառի նրբ. 6 շենքի 86 բնակարանի բնակիչ, 21.03.1977թ. ծնված Դավիթ Գրիգորի Եգանյանը, ով ներկայացվել է ՀՀ քննչական կոմիտեի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին:

Նույն օրը Դավիթ Գրիգորի Եգանյանը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործություն կատարելու կասկածանքով ձերբակալվել է:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Դավիթ Գրիգորի Եգանյանը 24.06.2012թ. հաշվառված է ՀՀ ԱՆ «Ավան հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ում՝ «Անձի և վարքի խանգարում գլխուղեղի օրգանական ախտահարման հետևանքով» ախտորոշմամբ, ինչպես նաև ոչ բավարար չափով է տիրապետում քրեական դատավարության լեզվին:

Կասկածյալ Դավիթ Գրիգորի Եգանյանը ներկայացվել է տուժող Էռաստ Ռուդոլֆի Ավետիսյանի ճանաչմանը, որի ընթացքում տուժող Էռաստ Ավետիսյանը մատնացույց է արել Դավիթ Եգանյանին և հայտարարել, որ իրեն և Գեղամ Մկրտչյանին 29.07.2018թ. իր բնակարանում խոհանոցային դանակով հարվածել և մարմնական վնասվածքներ է պատճառել վերջինս:

Տուժողներ Էռաստ Ռուդոլֆի Ավետիսյանը և Գեղամ Աղասու Մկրտչյանն իրենց տված ցուցմունքները պնդել են կասկածյալ Դավիթ Գրիգորի Եգանյանի հետ առերես հարցաքննությունների ժամանակ:

03.08.2018 թվականին Դավիթ Գրիգորի Եգանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով այն **հանրորեն վտանգավոր այն արարքի կատարման համար**, որ նա դիտավորությամբ երկու անձանց՝ Էռաստ Ավետիսյանին և Գեղամ Մկրտչյանին պատճառել է կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածքներ.

Այսպես՝

Դավիթ Եգանյանը 2018թ. հուլիսի 29-ին՝ ժամը 16:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Նոր Նորքի 6-րդ զանգվածի <<Հուշարձան>> կոչվող այգում պատահական հանդիպել է Էռաստ Ավետիսյանին և Գեղամ Մկրտչյանին ու վերջիններիս առաջարկել գարեջուր խմել, Դավիթ Եգանյանի առաջարկը ընդունելով Էռաստ Ավետիսյանն էլ իր հերթին առաջարկել է գարեջուրը խմել Երևան քաղաքի Նոր Նորքի 6-րդ զանգվածի Շոպրոնի 2-րդ նրբանցքի՝ իրեն պատկանող թիվ 48-րդ բնակարանում: Այդ կապակցությամբ խանութից գնել են օղի, գարեջուր, սնունդ և գնացել են Էռաստ Ավետիսյանի վերը նշված բնակարան ու երեքով միասին օղի և գարեջուր են օգտագործել: Խոակցության ընթացքում Դավիթ Եգանյանը Էռաստ Ավետիսյանին սկսել է անվանել <<Թուրք>>, <<Թուրքի լամուկ>>, ինչի կապակցությամբ Էռաստ Ավետիսյանի և Դավիթ Եգանյանի միջև վիճաբանություն է ծագել, որին միջամտել է Գեղամ Մկրտչյանն, այդ ընթացքում Դավիթ Եգանյանը սեղանի վրայից վերցրել է խոհանոցային դանակ և երկու անձանց առողջությանը ծանր վնաս պատճառելու դիտավորությամբ հարվածներ հասցրել Էռաստ Ավետիսյանին և Գեղամ Մկրտչյանին:

Դավիթ Եգանյանի գործողությունների արդյունքում Էռաստ Ավետիսյանի առողջությանը պատճառվել է՝ կրծքավանդակի աջ կեսի կտրած-ծակած թափանցող վիրավորում՝ թոքի վնասումով, հեմոթորաքս ձախ կեսի կտրած-ծակած վերքի ձևով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս, իսկ Գեղամ Մկրտչյանին՝ որովայնի առաջային պատի կտրած-ծակած թափանցող վերք, կրծքավանդակի ձախ կեսի կտրած-ծակած թափանցող վիրավորում հեմոթորաքս վնասվածքների ձևով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս:

Առաջադրված մեղադրանքի վերաբերյալ Դավիթ Եգանյանը իրեն լիովին մեղավոր է ճանաչել և տվել է խոստովանական ցուցմունք:

03.08.2018 թվականին Դավիթ Գրիգորի Եգանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառել կալանավորումը:

31.08.2018 թվականին որոշում է կայացվել Դավիթ Գրիգորի Եգանյանի նկատմամաբ դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն նշանակելու մասին, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ստացիոնար հոգեբուժական բաժանմունքի փորձագետներին:

05.09.2018 թվականին որոշում է կայացվել միջնորդություն հարուցել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ թույլատրելու ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն կատարելու համար մեղադրյալ Դավիթ Գրիգորի Եգանյանին 2018 թվականի սեպտեմբերի 11-ից տեղավորել ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ստացիոնար հոգեբուժական բաժանմունքում, որը դատարանի կողմից բավարավել է:

11.09.2018 թվականին Դավիթ Գրիգորի Եգանյանը տեղավորել է ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ստացիոնար հոգեբուժական բաժանմունքում:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել պարզել մեղադրյալ, կալանավոր Դավիթ Գրիգորի Եգանյանի հոգեկան առողջության վիճակը և գործի համար նշանակություն ունեցող մի շարք այլ հարցեր, որի համար անհրաժեշտ են դատական հոգեբանության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ:

Նշված հարցի պարզաբանման համար և փորձագիտական եզրակացություն ստանալու նպատակով ներկայացվել է Խաչատուր Աբովյանի անվան Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի՝ Կրթության, հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Կիրառական հոգեբանության ամբիոնի դոցենտ, հոգաբանական գիտությունների թեկնածու Լևոն Կարոյի Սարգսյանը, ով նշված փորձաքննության իրականացման համար տվել է իր համաձայնությունը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 248-249 հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթիս թիվ 17110818 քրեական գործով Խաչատուր Աբովյանի անվան Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի՝ Կրթության, հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Կիրառական հոգեբանության ամբիոնի դոցենտ, հոգաբանական գիտությունների թեկնածու Լևոն Կարոյի Սարգսյանին ճանաչել փորձագետ՝ նրան պարզաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-339-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

2. Նարինե Եղիշի Ստեփանյանը հայտարարեց, որ չի առարկում իրեն փորձագետ ճանաչելու դեմ:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝ ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Որպես փորձագետի իմ իրավունքներն ու պարտականությունները պարզաբանվել են, միաժամանակ նախազգուշացված եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-339-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

_____ «____» _____ 201_ թ.